

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ**

17 նոյեմբերի, 2021 թ.

N 63 - Լ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Աուդիտորական գործունեության հանձնաժողովի կանոնադրության 7.1 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Աուդիտորական գործունեության հանձնաժողովի 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2021թ. նոյեմբերի 17-ի N 63 - Լ որոշման

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»

հասարակական կազմակերպության

Աուդիտորական գործունեության հանձնաժողովի

2022 թվականի գործունեության ծրագիրը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Աուդիտորական գործունեության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022թ. գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) կազմվել է ի կատարումն Հանձնաժողովի կանոնադրության 7.1 կետի՝ նպատակ ունենալով ապահովել Հանձնաժողովի գործառույթների արդյունավետ իրականացումը և Պալատի խորհրդի կողմից Հանձնաժողովի գործունեության նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացումը:

ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ և ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գործունեության ծրագրի հիմքում դրված են Հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված ինչպես հիմնական, այնպես էլ այլ գործառույթներ.

Հիմնական գործառույթներ.

- Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների, Պրոֆեսիոնալ հաշվապահի մասնագիտական էթիկայի կանոնագրքի, ինչպես նաև դրանցում տեղի ունեցած փոփոխությունների և լրացումների թարգմանությանն աջակցություն.
- Աշխատաժողովների, կոնֆերանսների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում՝ կապված աուդիտորական գործունեության զարգացման, ոլորտին վերաբերող մասնագիտական քննարկումների, ինչպես նաև դրանց վերաբերող այլ հարցերի հետ.
- Աուդիտորական գործունեությանն առնչվող տեղեկատվական նյութերի պատրաստում, հրապարակում և տարածում.
- Աուդիտորական գործունեության ոլորտին վերաբերող շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների նախաձեռնում.
- Աուդիտորական կազմակերպությունների մեթոդաբանական բազայի ստեղծմանը և/կամ բարելավմանը աջակցություն.
- Պալատի անդամներին աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի կիրառման վերաբերյալ մեթոդական օժանդակության տրամադրում.
- Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների՝ աուդիտորական գործունեության իրականացման հետ կապված օրինական շահերի պաշտպանության նպատակով մասնագիտական օժանդակություն:

Այլ գործառույթներ.

- Օժանդակել Պալատի հատուկ և մասնագիտական մյուս հանձնաժողովների և Պալատի աշխատակազմի կողմից Պալատի անդամների հետ փոխադարձ կապի ամրապնդմանն ուղղված միջոցառումների մշակմանը և իրականացմանը.
- Գործնական կապեր հաստատել և համագործակցել արտերկրի համանման կառույցների համապատասխան հանձնաժողովների կամ այլ մարմինների հետ.
- Գործնական կապեր հաստատել և իր գործառույթների մասով համագործակցել պետական մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների համապատասխան մասնագետների, ստորաբաժանումների հետ:

Գործունեության ծրագիրը կազմելիս նախատեսվող միջոցառումները և դրանց կատարման ժամկետները պլանավորվել են՝ ելնելով յուրաքանչյուր կոնկրետ գործառույթի բնույթից և դրա իրականացման նկատմամբ սահմանված պահանջներից:

Հանձնաժողովի կողմից այլ գործառույթների իրականացման համար կոնկրետ միջոցառումներ և ժամկետներ սահմանված չեն՝ դիտարկելով դրանք որպես ընթացիկ աշխատանքներ, որոնք կիրականացվեն ըստ անհրաժեշտության:

ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

h/h	Գործառույթ	Միջոցառում	Ժամկետ
1	Աշխատաժողովների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում	Կուսումնասիրվեն նման միջոցառումների կազմակերպման թեմաները և կներկայացվեն Պալատի խորհրդի հավանությանը, որից հետո կկազմակերպվի նման միջոցառում՝ աուդիտորական կազմակերպությունների հետ:	Տարվա ընթացքում
2	Աուդիտորական գործունեության վերաբերյալ տեղեկատվական նյութերի պատրաստում, հրապարակում և տարածում	Կուսումնասիրվեն ԱՄՍ-ներում կամ ՀՀ օրենսդրական դաշտում աուդիտորական գործունեությանը վերաբերող փոփոխություններն ու նորությունները և տեղեկատվական նյութերի տեսքով կներկայացվեն աուդիտորական կազմակերպություններին:	Տարվա ընթացքում
3	Աուդիտորական գործունեության ոլորտին վերաբերող շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների նախաձեռնում	Շարունակական մասնագիտական զարգացման նպատակով աուդիտին վերաբերող թեմաներին առնչվող քննարկումների կազմակերպում:	Կհամաձայնեցվի Պալատի աշխատակազմի հետ
4	Աուդիտորական կազմակերպությունների մեթոդաբանական բազայի ստեղծմանը և/կամ բարելավմանը աջակցություն	Կկազմակերպվեն քննարկումներ աուդիտորական կազմակերպությունների հետ՝ վերջիններիս կողմից մեթոդաբանական բազային վերաբերող հարցերի վերաբերյալ:	Ըստ պայմանավորվածության

5	Հանձնաժողովի կողմից այլ գործառույթների իրականացման համար կոնկրետ միջոցառումներ	Աուդիտորական կազմակերպությունների կողմից բարձրացված հարցերի (այդ թվում՝ մեթոդաբանական) քննարկում:	Ըստ անհրաժեշտության
6	Պալատի էտրիբրդի հանձնարարականների կատարում	Աուդիտի ոլորտի զարգացմանն ուղղված այլ նախաձեռնություններ:	Տարվա ընթացքում
7	Այլ գործառույթներ	Կկազմակերպվեն ըստ անհրաժեշտության:	Տարվա ընթացքում

ՀԱՊ Աուդիտորական գործունեության

հանձնաժողովի նախագահ՝

Էմիլ Վասիլյան